

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳԱՆՏԻՐԷ, Ապրիլի փոքր

ՄՈՒԳԱԹԹԱՄԻ ճիշտ դիմաց

Pour les annonces s'adresser
à la Rédaction du journal PHAROS
Le Caire, rue Abdine
vis-à-vis du «Mokattam»

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՄԻՆ

Մէկ անգամի համար առողջ 3 Ղը. ողջ.
Մէկ անգամի աւելի ծանուցումներու համար
մասնաւոր պայմաններ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ

Տարեկան Ղը. ողջ 100

Վեցամսեայ » 55

Եռամսեայ » 30

ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Տարեկան Ձր. 26

Վեցամսեայ » 14

ԵՏ ՁԻ ՏՐՈՒԹԻՐ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՈՒՂՂՈՒՄԸ

ՈՒՆԻ ԵՂ ԳՐՈՒԹԻՒՆ



ՓԱՐՈՍ

Լ. ՐԱ. Գ. Ի. Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ, ՀԻՆԳԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Տնօրէն-Խմբագիր Յ. ԱՂՊԻՄԻ

ԾԱՆՐԵԼՈՒԹԵԱՆ ԱՍՊԵՏՆԵՐԸ

Ա.

—Նայէ՛ Լուսինեան իշխանի ասպետ,
նեղէն մէկ կ'անցնի կոր, ըսաւ բարեկամ
խնդարով, երբ Սըլէմիտի Պարը նստած էինք,
և ցոյց տուաւ զխարկաւոր երիտասարդ մը
որ զբաղած էր իր ուղեկը տեղաւորելու:

—Ո՛վ է...:

Երբ անունը տուաւ, անմիջապէս յիշեցի որ ես այլ պարոնի Սինայ լեռան և Սուրբ Կաթարինէի կանոնականութեան ասպետի կարգին մէջ մտնելու սատարած էի:

—Խնդարու համար այդ ուղեկը դրած կը պատի, հարցուցի:

—Ձէ՛, ինչ կ'ըսես, մարդը անով կը պարծի:

Խնդր միաժամ հոգի...:

Ուրեմն մինչև իսկ մեր մէջ կան գեոմարդիկ որոնք կը կլեն Ամբրոսիոս Գալֆանի իշխանութիւնը, Կիլիկիոյ, Կիպրոսի, Երուսաղէմի այդ ետարցայ վեհափառութիւնը, որ այնքան հարազատօրէն Guy de Lusignan է որքան Emilienne... d'Alençon:

Ու կը մտածեմ բոլոր այն ծիծաղաշարժ խաղաղութեան որ կայ Գուստին Լուսինեանէ՛ն՝ այդ բարոյապէս ու ֆիզիքապէս ցաւազար մարդկէն՝ ասպետ հռչակուելու մէջ:

* * *

Երկու տարի առաջ, որ մը, հրաւիրուեցայ պաշտօն ընդունիլ Ամբրոսիոս Գալֆանիին իր անձնական բարոյազար և Ֆրանսերէն-Հայերէն բաղդիրքի աշխատութեան օգնող:

Առտու մը կանուխ գացի Ալընի տը Նէոյի թիւ 108:

—Իշխան Լուսինեան հո՞ն է, հարցուցի դանապանին:

—Բակին խորը դիմեցէ՛ք:

Քիչ մը առաջանալով՝ հասայ պզտիկ պարտիզի մը դրան առջև որուն վերեւ, խարխիլի փայտի կտորի մը վրայ, գունաթափ կարմիր ներկերով գրուած էր «Villa Lusignan»:

Եկած էի իշխանապետութեան սահմանադրութիւն:

Գուրը կը պուտէր և սակայն ու զանգաւին շուտէր բրդած: Չեղբով դրան տրուած քանի մը հարուածներու ձայնը չկրցաւ հասնիլ մինչև արքայական ականջները: Մտաբերեցի պարտէզի երկաթեղմէն վեր մաղլըցիլ և ցատեցի երբեք թագաւորութեանց երկիրը. բայց հոգիս ընտարարուած մը պիտի ըլլար:

տի ըլլար ասիկա և իրաւամբ պիտի նկատուէր casus belli մը: Երայրայեղ միջոցներու դիմելէ առաջ, Լահէյի դեսպանախորհուրդին ոգոյն աւելի համաձայն գտայ վերադառնալ զանապանին ընդ և ներս մտնելու միջոցներուն վրայ խորհրդակցիլ հետը: Հազիւ ըստ հասած էի երբ՝ բարեբախտաբար՝ Պազիլ, իշխանին կառավար, ներս մտաւ:

—Ահաւասիկ պարոն մը որ իշխանը տեսնել կ'ուզէ, ըսաւ զոնապանը զիս ցոյց տալով նորեկին:

—Նախապէս ունիկըութիւն խնդրած էք, հարցուց Պազիլ, կասկածոտ աչքով մը զիս շափշփիլէ ետքը:

—Իշխանին նոր բարտուղարն եմ:

—Այո տարբեր բան. ուրեմն միասին եկէք:

Ու վերադարձանք պարտէզի դրան առջև:

—Մարկոմբ, Մարկոմբ, պոռաց Պազիլ, իշխանին նոր բարտուղարը եկած է և ներս մտնել կուզէ:

Քիչ մը ետք, պարտէզին մէջ ոտնաձայն մը աւետեց մեզի թէ գուրը բացուեց և վայրկեանը հասած էր:

Վարդապետ լայն ցայտազնեցողով հոլանի աղջիկ մը, գիրուկ ու ժպտերես՝ երեցաւ դրան առջև:

—Պարոն Օտեան էք:

—Այո՛, օրիորդ:

—Հրամանեցէք:

Ներս մտայ:

Ինչ որ փակ դրան ետեւն պարտէզ են թաղրած էի՝ անմշակ հողի կտոր մըն էր, միայն քանի մը աղաւթի ծառերով հովաւաւորուած: Հոս ու հոն երեք շուր վայրի թուփեր անձուրեղաբար բուսած էին մեղմելու համար՝ ընդ մը գետին անապատային լեռնութիւնը: Իսկ Վիլլան, ա՛հ խեղճ քայքայուն պատկեր Լուսինեանց կործանումին, երկու յարկով հինուրդի աղտոտ անակ մը, ճաթրած պատերով, թափթփած փեղկերով, կոտորած ապակիներով:

Անցանք Մարկոմբին հետ՝ իշխանական հողերէն, ետեւին թողլով Պազիլը որ նորէն բանալիով ամրապնդեց մուտքը և տասը քալ ճամբայ ընելէ յետոյ հասանք վերջապէս գետնայարկի սենեակ մը որ ընդունելութեան զահլիճն էր: Հոն ստիպուեցայ կէս ժամի չափ սպասել իշխանին ներկայանալէ առաջ:

Այս սալոնը ամբողջ իշխանական բնակութեան միակ վայրն էր ուր ճոխութեան շողորմ մը կարելի էր տեսնել: Հոն եկած

խրած էին Մառի իշխանուհոյն կենդանութեան մնացած կաշկարասներու մէկ մասը, զաշխակ, քանի մը զորք, հայելի մը, զարդասեղաններ, գեղօրներ կային: Պատերը ծածկուած էին իշխանին պատկերներով ու լուսանկարներով: Բարեկէն անցնող աւան հայ ուսանող, նկարիչ կամ ոչ, հատ մը Լուսինեան իշխան գծած ու բերած էր զրամական նուէրի մը ակնկալութեամբ. պատկերներէն զատ կիսանդրիներ ալ կային նոյնպէս Ամբրոսիոս Գալֆանիի գէմբը յաւերժացնող, յետոյ շրջանակներու մէջ առնուած կարգ մը զրաթիւներ, զանազան բարեգործական հաստատութիւններէ ուղղուած, նպաստ խնդրելու կամ ընդունուած նպաստի մը շնորհակալութիւն յայտնելու համար: Առնեմք զատ խոշոր բարտէ մը, Կիլիկիան, Կիպրոսն ու Պաղեստինը պարունակող, ցոյց կուտար այն երկիրները որոնց վրայ կը տարածուի Ամբրոսիոս Գալֆանիի ցնորական թագաւորութիւնը: Ու վերջապէս խոշոր ծիւղազարկան ծառ մը, ալ ու ձախ ոստարձակ, Կիլիկիոյ, Կոնստանտնուպոլ, Լիւնսնիով տերաւորուած, որուն ճիւղերուն ցաւազար գալարումները յուսահատ ճիւղով մը կը ջնանային հասնիլ մինչև հէք իշխանին անունին:

ԵՐՈՒՄՆԻ ՕՏԵԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԺՄԱՐՔԵՆ

ԱՆԿԱԿԱՆ ՇԱՀԵՐԸ ՊԱՐՄԱՍՏԱՆԻ ՄԷՁ. — Անգլիական Խորհրդարանը իր Յուն. 22ի նիստին մէջ զահաճառին տրուելիք պատասխանով զբաղեցաւ:

Ազատական Պ. Խորհրդի Ուսումըն նոր բանաձև մը առաջարկեց հետեւեղ իմաստով.

«Եւ խոնարհաբար զիտիլ կուտանք ձեր վեհափառութեան թէ անհրաժեշտ է ըստ բաւականի միջոցներ ձեռք առնել բրիտանական կայսրութեան առեւտրական և քաղաքական շահերը Պարսկաստանի մէջ պահպանելու համար»:

Ըստ Պ. Ուսումընի Անգլիոյ աւանդական քաղաքականութիւնը, Հնդկաստանի տեր ըլլալէ ի վեր, կը կայանայ Պարսկաստանի անկախութիւնը և առեւտրական ազատութիւնը պահելու մէջ: Ռուսիոյ և Մեծն Բրիտանիոյ այն յայտարարութիւնները թէ՛ Պարսկաստան պէտք էր պահուէր իրեն երկու մեծ պետութիւններու միջև բախումները արգելող պետութիւն մը, 1834էն ի վեր շատ անգամներ կրկնուած են: Պարսկաստանը հնդկական կայսրութեան համար առեւտրական մեծ կարեւորութիւն ունի: Ռու-

սիան յաջողեցաւ մաքսապաշտ դրութեամբ սակագրիներու միջոցաւ գրեթէ ամբողջովին անկամալութեամբ անգլիական վաճառականութիւնը հիւսիսային Պարսկաստանի մէջ և նոյնպէս կը սպանայ հարաւային մասերու անգլիական վաճառականութեան շահերուն:

Առնաբանը կը կարծէ թէ Անգլիա պէտք է համաձայնի Ռուսիոյ հետ իրենց ազդեցութեան տակ առնուելիք շրջանակներուն և երկաթուղիներուն շինութեան մասին: Ճամբաներու շինութեան գալով՝ Պ. Ուսումըն կ'ըսէ թէ Անգլիա, առաջնութեան իրաւունք մը պէտք է ունենայ հարաւային Պարսկաստանի ճամբաներուն համար. մինչդեռ, միւս կողմէ, Պ. Վալթըն կ'ըսէ թէ՛ Անգլիոյ որ և է առաջնութիւն պիտի չընէ թէ՛ Ռուսիա առաջնութեան նախնորդական իրաւունք մը ունենայ հիւսիսային կողմը: Պէտք չէ կասկածիլ թէ քանի մը տարիէ ի վեր անգլիական ազդեցութիւնը երթալով կը նուազի: 1900ի պարսկական փոխառութեան երաշխաւորման մերժումը անկախ հարգած մը եղաւ Պարսկաստանի մէջ անգլիական ազդեցութեան համար: Այդ փոխառութիւնը Ռուսիա երաշխաւորեց:

Արտաքին գործերու նախարարութեան խորհրդականը, Բրանպորն զերկումը, ըսաւ թէ կառավարութիւնը չը կարծէր թէ այդ բանաձևէն տրանշալու տեղի կայ: Գալով Արեւելի մէջ Մեծն Բրիտանիոյ բռնած ընդհանուր դիրքին, Լորտ Բրանպորն հետեւեղ յայտարարութիւնը կ'ընէ.

«Պէտք է բացարձակապէս հասկցուի թէ Ասիոյ մէջ ազդեցութեան մենաշնորհը չունինք, և թէ քանի ուրիշ երկիրներ կարեն որ միջոցներով, կորովով ու վաշտական մեծ կարողութիւններով օժտուած կը շարունակեն իրենց շահերը զարգացնել Ասիոյ մէջ: Մեծն Բրիտանիոյ կացութիւնը այդ երկիրներուն հանդէպ անհրաժեշտ կեպով փոփոխութիւններ պիտի կրէ (ժափահարութիւն): Ասիական խոստովանիլը ամօթ չէ» (ժափահարութիւն):

Գրանպորն զերկումը կը յայտարարէ թէ ընդհանուր կերպով կարելի է ըսել թէ անգլիական քաղաքականութիւնը Ասիոյ մէջ կը կայանայ իրաց կացութիւնը պահպանելու մէջ:

«Չեմ ըսեր, կը յարէ Լորտ Գրանպորն, որ այս կանոնը բացասութիւններ չունենայ սակայն ընդհանուր կերպով, Անգլիոյ քաղաքականութիւնն է, Ասիոյ ամեն կողմը իրաց արդի վիճակին պահպանումը: Ասիական շահաւոր քաղաքականութիւն մ'է (ժափահարութիւն):

«Խօսքը շարունակելով Լորտ Գրանպորն կ'ըսէ թէ Պարսկաստանի մէջ անգլիական շահերը շատ մեծ են և հեծի է անոր կա-

Յ. ԲԵՄՊԷՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԷԹՆԵՐՈՒ

ՄԹԵՐԱՆՈՑ ԵՒ ՎԱՃԱՌԱՑԵՂԻ ԳԱՆՏԻՐԷ, — ԱԹԱՊԱ-ԷԼ-ԽԱՏՐԱ, ՆԱԽԻՆ ԶԱՊԹԻՑԷԻ ՇԷՆԳԻՆ ԴԷՄ

ընտրութիւնը թեթեւեղութեամբ չանցաւ: Ուստի չեմ բարեկամական յարաբերութիւններ տա-
ծելու ետեւ ըլլալով կառավարութիւնը կը
կարծէ որ պատշաճ չը պիտի ըլլար, զիստի
ի ձեռին խոնարհարար երթալ հայցելու
Ուստի կամ որ և է երկրի մը հետ հա-
մաձայնութիւն մը (ծափահարութիւնը):

«Սակայն և այնպէս Պարսկաստանի մէջ
տիրող կայսրութիւնը բարեկամական գոր-
ծակցութեան մը որ և է արդեւ չը յա-
րուցաներ: Ամեն պարագայի մէջ բրիտա-
նական կառավարութիւնը անկեղծօրէն փա-
փաքող է Պարսկաստանի ամբողջութիւնը
պահպանելու և ինքզինք այդ երկրին բա-
րեկամ ցուցնելու:

«Ինչ որ ըլլայ անկարելի պիտի ըլլար
Պարսկաստանի, մանաւանդ պարսկային ծո-
ցին վերաբերեալ բոլոր ինքիւններուն մէջ
Մեծն Բրիտանիոյ ունեցած օրինաւոր
դիրքը լրանելու: Ատենաբանի խօսքին նայե-
լով, ծովային գերիշխանութիւնը Անգլիոյ
համար պարսկային ծոցին մէջ ամենէն հա-
տատ երաշխաւորութիւն մը կը կազմէ:

«Յետոյ անցնելով երկրին առեւտրական
զարգացման խնդրին, Լորտ Գրանտըրնի
տեղ կուտայ թէ զերթէ տարի մը առաջ
բրիտանական հիւպատոսութիւն մը հաս-
տատուեցաւ Պէտքեր Սպարտի մէջ և իսպա-
հանի հիւպատոսութիւնն ալ ընդհանուր հիւ-
պատոսութեան աստիճանին բարձրացաւ:
Գալով Տիգրիսի վրայ բրիտանական շա-
հերուն, ասի երկրի մ'է որուն թղթատա-
րական վարչութիւնը զբաղական նպատակ
կ'ընդունի բրիտանական կառավարութեան,
նպատակ մը որ կարծուածէն շատ աւելի
օգտակար եղած է:

«Կառավարութիւնը անկեղծօրէն կը մտ-
թէ Պարսկաստանի անտեսական զարգացումը,
ինչ աղբիւրէ ալ այս յառաջագործութիւններ
ծնունդ տաւալով ըլլան, թող ըլլայ ուս-
տական աղբիւր մը թող ըլլայ գերմանական,
Պարսկային հեռագրական կեդրոնական գծի
մը շինութեան վերաբերմամբ բանակցու-
թիւնները յաջողեալ մօտ են:

«Պիտի շարունակենք, կ'ըսէ Լորտ Գր-
անտըրն, Պարսկաստանի մէջ և ի մաս-
նաւոր պարսկային ծոցին վրայ մեր շահե-
հերուն համար անհրաժեշտ եղող դիրքը
պաշտպանել, զիրք մը որ կը յուանայ,
նպատակ պիտի ունենայ Պարսկաստանի
յառաջդիմութիւնը (ծափահարութիւնը):»

Պ. Վալթըն արտաքին գործոց նախա-
րարութեան խորհրդականին պատասխան
նկատի առնելով, ժողովին թոյլտուութիւն
խնդրեց իր բանաձեւը ետ առնուլ:

ԹԵՐԹՕՆ «ՓԱՐՈՍ»Ի (57)

ԺՐՀԱՆ ՏԻՎԻԷ

ԲՐԷՆՍ ՄՈՒՐԱՏ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԲԱՐՔԵՆԷՆԵՐՆԵՐԸ ՆԵՐՇՆՁՈՒՄԸ ՎԷՊ

ԳԼՈՒԽ ԺԳ.

—Ինչ կ'ուզէք, հարցուց, առանց մին-
չի իսկ նստեցէք, բնոր:

—Ժերմէն, այս ընդունելութեան ցուրտ
ու անազնի հանգամանքին վրայում, վայրի-
կան մը անբարբառ կեցաւ, չիրաւով այլևս
գտնել պատրաստուած խօսքը, ի զուր ջա-
նալով յիշել այն փոքրիկ ճառը զոր կը
պատրաստուէր խօսիլ Մուրատի մայրը ի
գալի շարժելու և համոզելու համար:

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

Գալտեան վարժարանի աղջկանց
բաժնին վերաբացումը տեղի ունեցաւ
երէկ առտու, երկուշաբթի, չնորհիւ
Քաղաքական ժողովոյ կողմէ ձեռք
առնուած վճարական միջոցներուն:

Օր. Մօֆի Մանիսալեան պաշտօ-
նապէս վերահաստատուած է իր պաշ-
նին մէջ, հետեւաբար Օր. Մանի Պէյ-
լէրեան որ առժամապէս կը դադար-
ւորուէր այդ հաստատութեան մէջ,
այլևս կը քաշուի վարժարանէն ինք-
զինքը նուիրելու համար իր խմբա-
գրութեամբ հրատարակելի «Արտէ-
միս» ամսաթերթին:

Գալտեան վարժարանի հոգաբար-
ձութիւնը, թէ և քիչ մը ուշ, ստիպե-
ցաւ վերջապէս իր հրաժարականը մա-
տուցած է Տիգրան փաշայի, հրաժա-
րական մը՝ որ «անախկնակ» աղջե-
ցութիւնը չէ ըլլած Լոնտոն. ժողովոյ
վսեմ. Ստեփանուիւնի վրայ:

Այս կարգաբերութիւնը անշուշտ գո-
հունակութիւն պիտի պատճառէ ա-
շակերտներու ծնողաց որոնք այլևս
պատճառներ չունին իրենց տղաքը
կանոնաւորապէս դպրոց չի դրկելու:

Այս ամենուն մէջ ցաւալի սա կէ-
տը կայ որ, աղջկային իշխանութիւնը
ի զուր այնքան ատեն սպասեց, խըն-
դրոյն այս օրինակ ելք մը տալու
համար, քանի որ առջի օրէն կրնար
այս կեղծութիւնը վերջացնել այդ ողոր-
մելի խնդրը որուն երեսէն թէ՛ տը-
ղաքը տուժեցին և թէ՛ աղջկային սըն-
տուկը:

Հիմա իրենց կը մնայ լրջօրէն քա-
րեկարգել այդ հաստատութիւնը և
տալ անոր այնպիսի ուղղութիւն մը
որու մէջ քաջահաճոյքը տեղ չունենայ
և աս ու ան իրենց սահմանութիւնը
մեր խեղճ տղոց զլխուն վրայ չի
սովորին:

Կը սիրենք յուսալ որ Օր. Մօֆի
Մանիսալեան ալ իր կարողութեան
ամբողջ թափովը պիտի ջանայ այդ
ժամանակի կորուստը դարմանել ա-
ւելի ջերմ կերպով փարեղով իր պաշ-
տօնին և պիտի ուզէ աւելի զգոյշ
գտնուիլ նոր խնդիրներու տեղի չի
տալու համար, խնդիրներ՝ որոնք միշտ

վերջապէս խօսեցաւ, սրտէն գործ թա-
փելով յուզուած խօսքեր, ըսաւ պարզու-
թեամբ, եթէ ամուսնութիւնը կատար-
ուէր՝ իր բարեկամութիւնն ունենալիք անհը-
նարին կսկիծը և խեղճ կեանքը: Եւ որով-
հետեւ Զօհրա չէր պատասխանէր, մըռնեց:

«Ո՛հ, հանձմ, դուք որ այնչափ արդար,
այնչափ բարեփառ եք, զուր որ այդ աղ-
ջկան երկրորդ ու ճշմարիտ մայրն էք,
կ'ուզէք իրեն մշտնջենական գործախու-
թեանը պատճառ ըլլալ...»

Հանձմը, միշտ լուսթիւն սպհելով, կը
շատանար ապարանջանները դատարկին
շուրջը զարձնելով, և իրեն մօտը գացող-
ներուն ամենուն ալ ծանօթ այս բարկու-
թեան նշանը մտահոգութիւն պատճառեց
դատարակութիւն: Ինքն իրեն ըսաւ թէ
աւելի աղէկ չէր ընէր եթէ ելար երթար,

իրեն ի նպատակ չեն կրնար կարգա-
դրուիլ գոցէ:

—Վասպուրականի Որբախնամ Ըն-
կերութեան Ընդհանուր ժողովոյ նիս-
տը տեղի ունեցաւ կիրակի օր Աղզ-
Առաջնորդարանի ժողովասրահին մէջ:

Անդամներու մեծագոյն մասը ներ-
կայ գտնուեցաւ այդ նիստին որու
միջոցին Գործադիր ժողովը իր տա-
րեկան տեղեկագիրը և հաշուեկշիռը
ներկայացուց ժողովին որ գնահատե-
լով այդ պարունակներուն արդիւնաբեր
գործունէութիւնը շնորհակալութեան
քուէ մը առաջարկեց որ սիրով ըն-
դունուեցաւ ամենուն կողմէ:

Կարգացուեցաւ նաեւ Ընդհ. ժողո-
վոյ Ա. Ատենապետ Տիար Մ. Անա-
նեանցի հրաժարականը զոր տալ ըս-
տիպուած է իր մօտալուտ մեկնումին
հետեւեալ:

Ժողովը նկատի առնելով հրա-
ժարականին մէջ բացատրուած ար-
դարանալի պատճառաբանութիւնը, ըն-
դունեց Տիար Անանեանցի հրաժա-
րականը և շնորհակալութեան ուղերձ
մը տալու որոշումը տուաւ իր նախ-
կին ատենապետին որ իր հոգածու-
թեան յառաջդիմութիւնը և որուն
համար թէ՛ բարոյական և թէ՛ նիւ-
թական զոհողութիւններ յանձն ա-
ռած էր իր ատենապետութեան կրկին
շրջաններուն մէջ:

Ընդհանուր ժողովը, ըստ օրա-
կարգին, անցաւ ընդհ. ժողովոյ նոր
Դիւանին և Գործադիր ժողովոյ կազ-
մութեան քուէարկութեան և քուէից
բացարձակ առաւելութեամբ Մայր
Դիւանին անդամ ընտրուեցան՝

- Տիար Յովհաննէս Յակոբեան
- » Յովհաննէս Տէրվիշեան
- » Աւետիս Ամիրայեան
- » Յարութիւն Ալիբար

Իսկ գործադիր ժողովոյ անդամ
ընտրուեցան՝

- Տիար Ե. Աւագեան
- » Դ. Խաչատրեան
- » Օ. Խոստամեան
- » Լ. Խուրամաճի
- » Ս. Սարգիսեան
- » Տ. Պոտաղեան
- » Ա. Փափաղեան

Գառաջիկային կը վերապահենք
աւելի ընդարձակօրէն խօսիլ այդ ըն-
կերութեան գործունէութեան և օգ-
տակարութեան վրայ:

առանց սպասելու որ մօտալուտ երեցող փո-
թորիկը պայթէր, և հանձմը իր խորհրդա-
ծութեանցը թողուր:

Բայց Ժերմէնի մէջ գտնուող արիասըր-
տութիւնը յաղթեց այդ վայրկեանական տը-
կարութեան. իր փոքրիկ բարեկամութիւն
բովանդակ ապագան էր որ այս ժամուս
վտանգի մէջ էր:

—Հանձմ, սկսաւ զարձեալ տիրութեամբ,
չպիտի լսէք ինծի... Ես որ մինչև այս օ-
րը ամեն բանի մէջ զձեզ գոհացնելու հա-
մար ամեն ջանք ի գործ դրի, ես որ բը-
նաւ բան մը չիմացի ձեզմէ բաց միայն
ձեր յարգանքը և սէրը, որ ձեր գաւախե-
րը իմ գաւախերու ըրի, չպիտի վթար բը-
նաւ այն վշտին վրայ զոր այս աղաչանքս
կը պատճառէ իմ հպարտութեանս: —Գի-
տէք, կը սիրեմ Սթա Ապուհան. ան ինծի

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ

Յառաջիկայ կիրակի գիշեր տեղի ունենա-
լիք թատերական ներկայացումին պատրաս-
տութիւնները փութով յառաջ կը տարուի և
եթէ ծախուած տոմսակներու քանակութիւ-
նը նկատի առնենք, այդ երեկոյթը մեծ
յաջողութիւն մը ըլլալ կը խոստանայ այդ
մարդասիրական ընկերութիւններու սնտուկին
համար:

ՏԻԱՐ ՏԻՐԱՆ Գ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

Իր և իր ծնողաց կողմէ խորին շը-
նորհակալութիւնները կը յայտնէ
այն ամեն բարեկամներու և ծանօթ-
ներու որ ներկայ գտնուեցան իր ող-
բացեալ և սիրելի եղբոր ՔԵՐՈՎԱԶԷ
Գ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻ յուղարկաւորու-
թեան և իրենց ցաւակցութեան ըզ-
գացումները արտայայտեցին այս
տխուր առթիւ:

ԽԱՌՆ ԶԱՆԶԱՆԱԺԱՂՈՎ ՈՐԲԱԽՆԱՄ ԵՒ
ԱՂՔԱՍԱՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ

Թանձանժողովս շնորհակալութեամբ կը
ծանուցանէ թէ ողբացեալ Քերովազ Գ. Յո-
վակիմեանի մահուան առթիւ, փոխան ծաղ-
կեպակի հետեւալ նուիրատուութիւնք եղած
են Թանձանժողովս սնտուկին:

Տիար և Տիկին Ա. Նշաստանեան 97 1/2
դր. ողջ. Տիար Կ. Սիւրխարեան և Վ.
Պարմանեան 40 դր. ողջ. Տիար Կ. Քէչ-
եան 40 դր. ողջ:

(Կնիք)

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Ն. Բ. Խտիլը երեք օրէ ի վեր Մոն-
թալայի պալատը կը գտնուի ուր պիտի
մնայ մինչև յառաջիկայ ուրբաթ և օր մը
յետոյ պիտի նախագահէ Մոհամմէտ Ալի
հրապարակին վրայ տեղի ունենալիք նուի-
րական Գորգի փոխադրութեան հանդէսնե-
րուն:

—Մոնթալայէն ստացուած վերջին լու-
րերու նայելով, Ն. Բ. Խտիլուհին ծննդա-
բերութիւնը այս կամ յառաջիկայ շաբաթ-
ուան մէջ տեղի պիտի ունենայ եղբոր Ն.
Բարձրութիւնը յառաջիկայ Մարտ 4ին
Գահիրէ պիտի վերադառնայ Մոնթալայէն:

—Ն. Վ. Նախարարապետ և Ներքին
գործոց նախարար Մուսթաֆա բաշա Ֆէհ-
մի շաբաթ իրիկուան էջաբնակով Լուքսոր
մեկնեցաւ ուր ներկայ պիտի գտնուէր Գա-
նաբի տաճարին երեքօրականութեամբ լու-
սաւորուելու մասին երեկ հոգ կատարուելիք

համար կղկթ կաթոգի և հաւատարիմ քոյր
մը եղաւ, ինչպէս որ ձեզի համար ալ՝ սի-
րագործով աղջիկ մը, խոնարհ աղախին մը՝
ուրիշ որեւէ մէկ մը աւելի երախտագէտ ձեռ
իրեն ըրած բարիքներուն: —Չեզի խաբած
ըլլալու են, հանձմ, ձեր առջև այդ աղջի-
կը զրպարտած ըլլալու են իր չըրած մէկ
յանցանքովը... ձեր չուզելովը ձեր հաւա-
նութիւնը տուած ըլլալու են այս գործին:

Բայց բաւական է որ զուր բառ մը ըսէք
չարախօսները գողացնելու, անդամները
պապանձեցնելու, և իրեն արիւնը մտնելու
համար երկուս ըրած չուստականները խայ-
տառակելու համար... չպիտի ուզէք որ այդ
անարգ գործը կատարուի, որ ձեր որդեգ-
րած այդ աղջիկը ձեր իսկ հրամանաւ յա-
ռաջ եկած վիշտէ մը մեռնի...:

Ժերմէն լռեց, հեղձամղձուկ եղած այն

Գ. Է. ՍԷԼՎԱՃԵԱՆ

ԳԱՀԻՐԷ - ՄՈՒՍԳԻ

ԱՍՏԻՆԱՆԻՍՏՈՒՆ. ԱՄԻՆԱՅԻՆԻՍՏՈՒՆ. ԳՈՇԱՐԵՂԻՆԱՅ ԵՒ ՖՕՆՕԿՐԱՑՆԵՐՈՒ

Մ Ո Ւ Ջ Ո Ւ Ա Ն Լ Ա Յ Յ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՆԻՒԵՈՐՔԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆԱՅ 1843 ՎՅ

ՊԱՀԵՍՏԻ ԳՈՒՄԱՐ ՄԵԿ ՄԻԼԻԱՌ 563 ՄԻԼԻՈՆ 961 ՀԱՋԱՐ ՅՐԱՆՔ

Ապահովագրական ամեն կարելի դուրսիւնները կը գործադրէ. խառն ապահովագրութիւն, ամբողջ կեանք, զաւակաց դրամագրութիւն, ցմահ եկամուտ, եւայլն

ՄՈՒՋՈՒԱՆ ԼԱՅՅԻ սակագիրներ և ապահովագրութեան զանազան դրութիւնները չառաջնասիրած մի՛ ապահովագրութիւնը. — Առատաձեռն պայմաններ
Տեղեկութեանց համար դիմել ի Գահիրէ առ ՊՊ. Ն. ԲԻՐՁԻՍ և Ժ. ՎԱԼՖԻՇ, Ընդհ. ներկայացուցիչք:
Աղեքսանդրիա Անթ. Թ. ՌԱԼԻ, գլխաւոր գործակալաւոր: Գ. ԵԿԱՒՈՅ ԴԵՐ-Գործակալ ի Գահիրէ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԵ

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԴՐԱՄԱԴԼՈՒԻ 200,000,000 ՅՐԱՆՔ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ Յ ԵԳԻՊՏՈՍ
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ-ԳԱԶԻՐԷ ԲՈՒՍԱՅԻՏ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԵՆ կ'ստանձնէ ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ, ինչպէս փոխառութիւն արժէքաւոր թուղթերու վրայ:
Ժգլնթացիկ հաշիւներ կը բանայ արքայաւոր անանդներու վրայ:
Յրանալի և օտար երկիրներու վրայ կուտայ չէքեր, փոխանակադրեր, և վարկագրեր:
Կը դանձէ եգիպտոսի և արտասահմանի վրայ քաջուած փոխանակադրեր:
Աւանդ ձգուած դրամներուն վախարէն կանխորոշ պայմանաժամով մուծակներ կուտայ:

ԽՏԻՎԱԿԱՆ ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԸՆԿ.

ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԵՒ Կ. ՊՈԼՍՈՅ ՄԻՋԵԻ
ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՇՈԳԵՆԱԻԵՐՈՎ

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԿԻՈՅ ԳԻՐ
ԵԱԲԱԹԱԿԱՆ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ
ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն չորեքշաբթի օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բիրէա, Խլմիր, Մի. տիլի և Կ. Պոլիս:
ԺԱՄԱՆՈՒՄ. — Միկնոյն նաւահանգիստներէն ժամանում յԱղեքսանդրիա ամեն Շաբաթ օր, առաւօտեան ժամը 7ին:
ԾԱՆՈԹ. — Ճամբորդները բաւական ժամանակ կ'ունենան շոգեմանները Բի.

բէա հանդիպելուն, Աթէնք այցելել:
ՍՈՒՐԻՈՅ ԳԻՐ.
ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն շաբաթ օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բոն-Սայիտ, Եաֆա, Հայֆա, Պէյրութ, Տրիպոլիս, Մէրսին և Իսկէնդերուն:
ԺԱՄԱՆՈՒՄ. — Միկնոյն նաւահանգիստներէն ժամանում յԱղեքսանդրիա ամեն Չորեքշաբթի առաւօտեան ժամը 6ին:
Տասնընչինգ օրը անգամ մը՝ երթեւեկ կարմիր

Ծովու հետեւեալ նաւահանգիստներու միջև.
ՃԻՏՏԷ, ՍՈՒՐԻՈՅ, ՀՕՏԷՅՏԱ, ԱՏԷՆ
Ճամբորդութեանց և ապրանց համար դիմել Ընկերութեան Աղեքսանդրիոյ, Բոն-Սայիտի, Սիւէզի և Գահիրէի գործակալութեանց, ինչպէս նաև Գուրի ամեն մամնաճիւղերուն:
1--1902

ԹԱՆՁՆԱԿԱՏԱՐ-ԴՈՐԾԱԿԱՏԱՐ ԿԱՐԱՊԵՏ ԵՐՁՆԱՍԵԱՆ Ի ԳԱՀԻՐԷ

Գահիրէէն և չըջականերէն կ'ընդունուին՝ Պոլիս, Վենետիկ և արտասահմանի ուրիշ կեդրոններ գտնուած ամեն տեսակ գիրքերու, ինչպէս նաև Համպուրկի, Պրոնշուրկի վիճակահանուածեանց տոմսակներու, Եգիպտական Գրէտի Ֆոնսիէի, Բուսէլի երկաթուղոյ բրամբաններու, և դարձեալ ամսավճարներով արժէթղթեր ձեռք բերելու յանձնարարութիւններ կային:
Արժեթղթերու, վիճակահանութեանց վերաբերեալ ապահովութեան ըլլալու են կանխիկ փոսթի միջոցաւ: Գիրքերու համար կարելի է նախապէս կէսը զրկել և մնացեալը «գօնթու ռամպուրման» վճարել այն պահուն, երբ յանձնարարուածները զրկուին իրենց հասցէներուն:
Մինչև 20 ջրչ. արժէքով յանձնարարութիւններու համար Եգիպտ. Տ. միլիմետր դրոշմաթուղթեր կ'ընդունուին:
Փոխադրութեանց, թղթակցութեան, մաքսի ևայլն ծախսեր միշտ յանձնարարողներուն կը պատկանի:
Հասցէ՝

Garabed Erzenzatsian
Rue Abdul-Aziz
CAIRE

Ա. ՄԱՅԷՐ ԵՒ ԸՆԿ. ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ, ԳԱՀԻՐԷ

—X—
Մեծ վաճառատուն հանդերձեղինաց, արանց, կանանց և տղայոց հասարկ:
Ձախի վրայ գրեւորներ, շուագոյն պայմաններով:
ՎԵՐՁԻՆ ԳԻՆ

Ռ Ո Ւ Ս Ա Կ Ա Ն ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԵՒ ԱՌԵԻՏԲԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԹՂԹԱՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԻՈՐ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ
Ի ՃԷՂ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ, ԲԻՐԷԻ, ԻՋՄԻՐԻ, Կ. ՊՈԼՍՈՅ, և ՕՏԷՍԱՅԻ
Հետեւեալ նոր և առաջնակարգ շոգեմաներով

ԱՆԲԸՐԷՕՐ ՆԻՔՕԼԱ. տրղթ. թան. 5500	ԶԻՍԱՋՅ տարողութիւն թան. 5500
ԲԷՆ ՕԼԿԱ " " 5500	ԶԱՐ " " 5500

ԵԱԲԱԹԱՐ ԱՆԴԱՄ ՄԸ կանոնաւոր մեկնում Աղեքսանդրիայէն դէպ ի Օտէսա, հանդիպելով ԲՕՌ ՍՍՅԻՏ, ԶՐԻՄ ՏԱՐՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ ուր կէ անմիջական հաղորդակցութիւն ընկերութեան այն շոգեմաններուն հետ որ ուղղակի կ'երթան ՍԷՎԱՍՏՈՓՈԼ, ՍԵԻ ԾՈՎՈՒ ԱՍԻԱԿԱՆ ԵՃԵՐՔՆԵՐԸ, ԿՈՎԿԱՍ, ԽՐԻՄ և ԱՋՈՅԻ ԾՈՎ:

ԵԱԲԱԹԱՐ ԱՆԴԱՄ ՄԸ մեկնում Աղեքսանդրիայէն դէպ ի ԲՕՌ ՍՍՅԻՏ, ԵԱՅԱ, ՊԷՅՐՈՒԹ, ՏՐԻՊՈԼԻՍ, ՄԷՐՍԻՆ, ԲԻՐՈՍ, ԻՋՄԻՐ, ՍԵԼԱՆԻԿ, ՏԱՐՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ:

ԳԻՄԵԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ
Աղեքսանդրիա, Թիքասաւ փողոց:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱՋԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Հաստատեալ խտիվական Հրամանագրով
25 Յունվար 1898

Դրամագրութիւն Անգլ. ոսկի 4, 500,000
Պահեստի դրամ " " 193,000
Կառավարիչ. Սըր Էլվին Բալմէր.
Ընկ. կեդրոն ի Գահիրէ: Մասնաճիւղեր.
Աղեքսանդրիա, Մանսուրա, Խարթում:
Եգիպտական Աղգային Դրամատունը կընդունի անանդներ, դրամ փոխ կուտայ և ընթացիկ հաշիւներ կը բանայ ապրանքի և արժէքաւոր թուղթերու վրայ:
Կը գնէ և կը վաճառէ արտասահմանի վրայ բաշտած փոխանակադրեր և կը ստանձնէ ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ.

ԴՈՒՆԱՄԱՐՍՈՒԹԻՒՆ

ԵՒ ՄՐՏԱԽԱՐՈՒԹԻՒՆ

Ստամբուլ հիւանդութիւնը շատ անգամ դժուարամարտութիւն, սրտի խառնուրդ, լուծմանք, պնդութիւն և փսխում առաջ կը բերէ, ինչ որ հիմնապէս լուծելու համար պետք է ա են ճաշէ վերջ ԲԷԿԼԻՈՒ ՍԱՆԿԻՆԷՐ անուն աղղու դեղէն մէյմէկ քիչ առնել:
ԲԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐԸ ուրիշ աւելցային դեղերու նման չի խանդարեր ստամբուր:
Կը ծախուի ամեն մեծ գեղարաններու մէջ: